ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

Համլետ Պետրոսյան, Հայկուհի Մուրադյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Համլետ Պետրոսյան, Հայկուհի Մուրադյան

ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱԽՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2022

Ներածություն

Հայկական մշակութային ժառանգության կանխամտածված զանգվածային ոչնչացումն իրականացվել է 20-րդ դարի ողջ ընթացքում. վանդալիզմի է ենթարկվել արևմտահայ մշակութային ժառանգության մեծ մասը՝ եկեղեցիները, վանքերը, կոթողները, խաչքարերը և այլն: Ըստ 1912-1913 թվականների Կ. Պոլսի հայկական պատրիարքարանի կողմից կազմված և թուրքական կառավարությանը ներկայացված պաշտոնական ցուցակի՝ Օսմանյան կայսրության ողջ տարածքում հայկական եկեղեցիների ու վանքերի թիվն անցնում էր 2000-ից (այդ թվում՝ 4-5-րդ դարերի վաղքրիստոնեական եզակի հուշարձաններ), որոնց մեծ մասը 20-րդ դարի սկզբին թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված ցեղասպանության ժամանակ թալանվեց, այրվեց և ավերվեց: Ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1974 թվականի տվյալների՝ կանգուն մնացած հայկական 913 պատմա-ճարտարապետական հուշարձաններից 464-ն ամբողջովին անհետացել են, 252-ն ավերակ են, 197-ն ամբողջովին նորոգման կարիք ունեն:

Թուրքիայում և Ադրբեջանում էթնիկ-մշակութային եղեռնի նպատակը մեկն է. հայ ժողովրդի ստվար զանգվածներին կոտորելուն, հայկական տարածքները յուրացնելուն զուգընթաց՝ վերացնել և յուրացնել հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները, հայկական քաղաքակրթության գոյության նյութական արտահայտությունները, որպեսզի այդ տարածքներում հայ ժողովրդի պատմական վկայությունները վերանան: Այս քաղաքականությունը ցեղասպանական ծրագրի մի մասն է կազմում. չկա՛ էթնիկ խումբ, չկա՛ նաև այդ տարածքներում որևէ մշակութային հետք:

Արցախի մշակութային ժառանգության պահպանությունն այսօր առաջնային մարտահրավերներից մեկն է ինչպես Արցախի և Հայաստանի, անյպես էլ աշխարհասփյուռ հայության համար: Ադրբեջանի Հանրապետության ձևավորումից ի վեր՝ ադրբեջանական պետական քաղաքականության անբաժան մասն է հայկական մշակութային ժառանգության բռնայուրացումը, որը ներառում է ինչպես ֆիզիկական ոչնչացումն, այնպես էլ ձևափոխումը, վերանվանումը և պատմական իրողությունների խեղաթյուրումը: Այս քաղաքականության վերջնանպատակն է լեգիտիմացնել տարածքային պատկանելությունը, ստեղծել միֆ, որի համաձայն տվյալ տարածաշրջանում ադրբեջանցիները կամ նրանց իքնահնար զանազան «նախնիները» ապրել են դարեր շարունակ: Այս նպատակի իրականացմանը խանգարում էին տարածաշրջանում հայերի բազմադարյան գոյության փաստերն ու ինքնին գոյությունը, մշակութային ժառանգությունը, որը թվագրվում է առնվազն մ. թ. ա. 6-րդ դարից մինչև մեր օրերը: Մինչ օրս էլ ադրբեջանական քաղաքականությունը չի շեղվել այս նպատակից՝ կիրառելով մշակութային ժառանգության բռնայուրացման տարբեր մեխանիզմներն ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական շրջանում:

Սույն ներածական քննությունը ներկայացնում է ադրբեջանական քաղաքականությունը խորհրդային և անկախության տարիներին՝ հատկապես շեշտադրելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած կրթա-մշակութային ժառանգության պահպանության վտանգները, մինչ օրս գրանցված վանդալիզմի դեպքերը և Արցախի

Հանրապետության արդի մարտահրավերներն՝ ուղղված մշակութային ժառանգության պահպանությանը: Քննությունը բաղկացած է վեց մասից, որտեղ ներկայացված են՝

- Պատմա-մշակութային հակիրճ ակնարկ:
- Խորհրդային գաղափարախոսությունը՝ որպես ադրբեջանական հայահալած քաղաքականության հիմնական գործիք. աթեիզմը, ինտերնացիոնալիզմը և խորհրդային «ազգային» քաղաքականությունը 20-րդ դարում:
- Արցախյան առաջին (ազատագրական) պատերազմից հետո Արցախի Հանրապետության մշակութային ժառանգության պահպանությունը և վերականգնման գործընթացը:
- Մշակութային վանդալիզմը 44-օրյա պատերազմի ընթացքում և հետո:
- Արցախի մշակութային ժառանգության պահպանության խնդիրները՝ միջազգային կոնվենցիաների լույսի ներքո:
- Միջազգային մշակութապահպան կառույցների արձագանքը:

Մաս 1. Պատմա-մշակութային հակիրճ ակնարկ

Արցախը և նրան հարող Ուտիքը պատմական Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգներն են: Եթե Արցախը զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի այս մասի առավելապես լեռնային ու նախալեռնային հատվածը, ապա Ուտիքն ավելի տափաստանային է և ձգվում է մինչև Կուր գետ: Արցախը լեռների մեջ պարփակված գետահովիտների երկիր է (նկ 1-2)* : Դեպի արևելք, ուր սկսվում է Ուտիքը, լեռները վեր են ածվում նախալեռների և միանում տափաստանին (նկ. 3):

* 1-34 նկարները՝ Համլետ Պետրոսյանի, 35-50-ը՝ https://monumentwatch.org/, նկ. 45-ը՝ https://www.panorama.am/am/news/, նկ. 48-ը՝ https://twitter.com:

Նկ. 1 Թարթառի գեղահովիտը:

Նկ. 2 Ամարասի հովիտը:

Նկ. 3 Արցախյան տափաստանը:

Երկու տարբեր աշխարհագրական ու բնա-կլիմայական միջավայրերը պայմանավորել են պատմա-մշակութային երկակի կերպարը՝ ամուր նստակյաց բնակչություն լեռնային գոտում և անընդհատ շարժումներ տափաստանում:

Արցախը և Ուտիքը հայ ժողովրդի պատմության սերտ մասն են կազմել առկա տվյալներով առնվազն մ. թ. ա. 6-րդ դարից, երբ դրանք հանդիսանում էին Երվանդունիների հայոց թագավորության սահմանային նահանգները: Երվանդունիների թագավորությունից էլ

այդ նահանգները մ. թ. ա. 2-րդ դարի սկզբներին մտան Արտաշես 1-ինի հաստատած Արտաշիսյան հայկական թագավորության սահմանների մեջ: Տիգրան Մեծը (մ. թ. ա. 95-55 թթ.) հյուսիս-կովկասյան ցեղերի դեմ պաշտպանության նկատառումներով նոր ռազմավարություն է մշակում՝ խոշոր ամրոցներ կառուցելով գետա-հովիտների՝ տափաստան դուրս գալու վայրերում, ինչը թույլ էր տալիս հսկողության տակ պահել դաշտավայրը մինչև Կուր գետ և ավելի հեռու: Այս իրավիճակը պահպանվում է մինչև Հայաստանի՝ արդեն քրիստոնյա Արշակունիների թագավորության անկումը: 428 թ. վերացնելով այդ թագավորությունը՝ Սասանյանները, որպես հյուսիսկովկասյան ցեղերի արշավանքների դեմ բավականին արդյունավետ համակարգ, ստեղծում են երեք նոր վարչա-քաղաքական միավորներ՝ մարզպանություններ՝ միևնույն Հայք, Վիրք և Աղվանք անուններով: Դրա հետևանքով Կուրի ձախափնյակն ու աջափնյակը միավորվում են մեկ մարզպանության, ապա և թագավորության մեջ (Վաչագան 2-րդ Բարեպաշտի), որին տրվում է Առան – Ռան (հայկական աղբյուրներում՝ Աղվանք) անունը և որին կցվում են նաև Հայաստանից անջատված երկու նահանգները՝ Արցախն ու Ուտիքը: Արցախն ու Ուտիքը ներառվում են նաև Աղվանից եկեղեցու կազմում, որը ստեղծվել էր 4-րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորչի կողմից իբրև Բուն Աղվանքի (այսինքն՝ միայն ձախափնյակի) եպիսկոպոսություն՝ Կապաղակ եպիսկոպոսանիստով, իսկ 5-րդ դարի երկրորդ կեսին վերաճում է արքեպիսկոպոսության-կաթողիկոսության՝ Չող-Դեր-բենդ կենտրոնով: Աղվանից եկեղեցին վարչա-քաղաքական առու-մով ավելի է ամրապնդվում 6-րդ դարի սկզբներին, երբ, ամենայն հավանականությամբ, Վաչագան Բարեպաշտ Աղվանից թագավորի ջանքերով և Երուսաղեմի աջակցությամբ նրա կաթողիկոսանիստը

բուն աղվանական ձախափնյակից տեղափոխվում է Կուրի աջափնյակ՝ մարզպանության նորակառույց մայրաքաղաք Պարտավ, իսկ նրա հոտի առավել կրթյալ մասն է դառնում Արցախի և Ուտիքի հայ բնակչությունը: Աղվանից եկեղեցին հետագա դարերում, որպես կանոն, ընդունում էր Հայ առաքելական եկեղեցու գերակայությունը, ուներ նույն դավանաբանությունն ու ծիսակարգը: Արցախի և Ուտիքի հայությունն իր անկախ կամ կիսանկախ քաղաքական վիճակը պահպանեց Աղվանից եկեղեցու կազմում մինչ 19-րդ դարի սկիզբը՝ մինչև Ռուսական կայսրության մեջ մտնելը, որին 1836 թ. հետևեց ցարական իշխանության կողմից Աղվանից եկեղեցու լուծարումը և նրա թեմերի միացումը Հայ առաքելական եկեղեցուն՝ Էջմիածնի կաթողիկոսությանը:

Արցախի բնակչությունը քրիստոնեության շնորհիվ տիրապետելով հայերեն գրին ու գրականությանը՝ 5-րդ դարից ի վեր ստեղծել է հազարավոր քրիստոնեական կառույցներ՝ վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, դամբարաններ, տարատիպ կոթողներ, թողել է մոտ երեք հազարի հասնող հայերեն արձանագրություններ, հարյուրավոր ձեռագիր գրքեր, որոնք այս երկրամասերի հայկականության ամենաէական վկայություններն են:

Արցախում հայերի և հայ մշակույթի նյութականացված վկայության ամենավաղ տեղեկությունները տալիս է Տիգրանակերտը (նկ. 4-5):

Նկ. 4 Արցախի Տիգրանակերտ, ընդհանուր տեսքը:

Նկ. 5 Արցախի Տիգրանակերտ, ամրացված թաղամաս, հատված հյուսիսային պարսպապատից:

Նկ. 6 Ամարասի վանք:

Նկ. 7 Վանքասար:

Նկ. 8 Եղիշա առաքյալի վանք:

Նկ. 9 Դադիվանք:

Նկ. 10 Գանձասարի վանք:

Նկ. 11 Հանդաբերդի վանք:

Նկ. 12 Չարեքտարի վանք:

Նկ. 13 Չափնիի վանք, զանգակատուն:

Նկ. 14 Ծիծեռնավանք:

Նկ. 15 Գտչավանք:

Նկ. 16 Հոռեկավանք:

Նկ. 17 Սպիտակ խաչ վանք:

Նկ. 18 Երից մանկանց վանք:

Նկ. 19 Խադարի վանք:

Նկ. 20 Ամարաս, խաչքար Սուրբ Աստվածածին, 1091 թվական, Ղազար կազմող:

Նկ. 21 Դադիվանք, խաչքարեր, 1283 թվական:

Նկ. 22 Պառավածոր, խաչքարային պատկերաքանդակ, 12-րդ դարի վերջ:

Արցախի նյութական ժառանգության գերակշիռ մասն անշուշտ կազմում են քրիստոնեական հուշարձանները, որնցից մի քանի տասնյակը համաշխարհային գիտական և մշակութային հանրությանը քաջ հայտնի նշանային հուշարձաններն են՝ Ամարասի վանք (նկ. 6), Վանքասարի եկեղեցի (նկ. 7), Եղիշա առաքյալի վանք (նկ. 8), Դադիվանք (նկ. 9), Գանձասարի վանք (նկ. 10), Հանդաբերդի վանք (նկ. 11), Չարեքտարի վանք (նկ. 12), Չափնիի վանք (նկ. 13), Ծիծեռնավանք (նկ. 14), Կատարո վանք, Գտչավանք (նկ. 15), Հոռեկավանք (նկ. 16), Սպիտակ խաչ վանք (նկ. 17), Երից մանկանց վանք (նկ. 18), Խադարի վանք (նկ. 19), հազարավոր խաչքարեր (նկ. 20-22), տապանաքարեր և այլն:

Մաս 2. Խորհրդային գաղափարախոսությունը՝ որպես ադրբեջանական հայահալած քաղաքականության հիմնական գործիք. աթեիզմը, ինտերնացիոնալիզմը և խորհրդային «ազգային» քաղաքականությունը 20-րդ դարում

Արցախի Հանրապետության տարածքում գտնվող հուշարձանների պաշտոնական ցանկն ընդգրկում է ավելի քան 4000 հուշարձան, որոնցից տասը տոկոսը նախաքրիստոնեական են, մոտ 1,5 տոկոսը՝ մահմեդական, որոնցից մոտ 20-ը՝ 14-16-րդ դարերի: Մնացածը հայկական քրիստոնեական հուշարձաններ են, որոնք թվագրվում են 4-19-րդ դարերով: Ահռելի հայկական քրիստոնեական ժառանգության առկայությունը ինքնին տարածքի պատմա-իրավական պատկանելության ամենաէական ցուցիչն է: Ադրբեջանական իշխանությունների հայկական մշակութային ժառանգության բռնայուրացման նկրտումները սկսվել են դեռևս 20-րդ դարի 20-30-ական թվականներին (ինչին էապես նպաստում էր խորհրդային աթեիստական գաղափարախոսությունը), սակայն այն կազմակերպված ու համակարգված քաղաքականություն դարձավ միայն նույն դարի 50-ական թվականների վերջերից, երբ ԽՍՀՄ-ում ծավալվող «ձնհալի» քաղաքականությունը հնարավորություն էր տալիս, որ միութենական ամեն մի հանրապետության տիտղոսակիր ազգ ի շահ իր ազգային նպատակի մեկնաբանի ու յուրացնի հանրապետության տարածքի մշակութային ժառանգությունը: Արդեն 60-ական թվականներից Արցախի մշակութային ժառանգության «նվաճումը» ադրբեջանցիների կողմից դառնում է Ադրբեջանի կառավարության հայահալած քաղաքականության բաղկացուցիչ մասը: Բռնայուրացումն ընթանում էր արտաքնապես բավականին խճողված, բայց ներքուստ ճկուն մեխանիզմի

միջոցով: Ինտելեկտուալ մակարդակով այն ստանում էր կեղծ գիտական բնույթ, ընդ որում՝ այդ նպատակի համար օգտագործվում էին երկու հիմնական լծակներ.

ա. քանի որ հայ-քրիստոնեական և թաթար-մուսուլմանական մշակույթների հակադրությունն ավելի քան ակնհայտ էր, ապա բռնայուրացման լծակներից մեկը ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների իրավահավասարության քարոզի ներքո այդ մշակույթների «հարազատության», «ընդհանուր ակունքների» և «նմանությունների» վերհանումն էր,

բ. մյուս լծակը միջանկյալ օղակի ստեղծումն էր, որի նպատակն էր արցախահայ մշակութային ժառանգության վերագրումը աղվաններին, իսկ աղվաններից էլ՝ ադրբեջանցիներին: Միջնորդավորված յուրացման մեխանիզմը հնարավորություն էր տալիս հարկ եղած դեպքում պահպանել թվացյալ չեզոքություն և կեղծ օբյեկտիվություն:

Այս երկու լծակների համալիր օգտագործումը, ինչպես ցույց տվեցին վերջին տասնամյակները, համապատասխան պայմաններում, բռնայուրացմանը կարող են տալ զուտ ակադեմիական, ասել է թե արդեն քաղաքացիություն ստացած վեճի բնույթ, ինչն անշուշտ «նվաճողի» մեծ հաջողությունն է:

Սակայն, բոլոր դեպքերում, այս նվաճումը կրում էր էլիտար բնույթ. դրանում հիմնականում ներգրավված էին վարչական օրգաններն ու գիտական մտավորականությունը, իսկ ադրբեջանական ժողովուրդի վերաբերմունքը դեպի այդ ժառանգությունը մնում էր կիսաանտարբեր (որը կարելի է բնորոշել որպես խորհրդային իրականության մեջ վերաբերմունք ժառանգության նկատմամբ ընդհանրապես), կիսաթշնամական (որը կարելի է բնորոշել որպես վերաբերմունք կոնկրետ հակադիր մշակույթի նկատմամբ):

Բուն ադրբեջանական քաղաքականությունն ուներ գաղտնի՝ ոչ հրապարակային բաղկացուցիչ ևս, որի ավերիչ գործունեությունը հնարավոր եղավ վավերացնել ազատագրված շրջաններում:

Նկ. 23 Ծարի սուրբ Սարգիս եկեղեցու բեկորապված քանդակազարդ քարերը Ծարի դպրոցի շենքում:

Նկ. 24 Ծարի սուրբ Սարգիս եկեղեցու բեկորապված քանդակազարդ քարերը Ծարի դպրոցի շենքում:

Նկ. 25 Չարեքտարի վանքը՝ վերածված գոմի:

Նկ. 26 Ղայբալու գյուղի եկեղեցու արձանագրությունը՝ ջնջված:

ԼՂԻՄ տարածքից դուրս գտնվող ադրբեջանական շրջաններում և նույնիսկ ԼՂԻՄ տարածքում գտնվող արդբեջանաբնակ գյուղերում կազմակերպված ձևով ավերվել, ոչնչացվել, վերօգտագործվել են հայ մշակութային ժառանգության անշարժ հուշարձանները: Բերենք միայն մի քանի օրինակ.

- ամբողջովին անհետացել են Ծարի սուրբ Սարգիս և Գետամիջի վանքերը. դրանց քանդակազարդ ու արձանագրակիր քարերը բեկորատվել և դրվել են ադրբեջանական դպրոցական շենքերի և բնակելի տների պատերում (նկ. 23-24),
- գոմի էր վերածվել Թարթառի վերնահովտում գտնվող Չարեքտարի վանքը (նկ. 25),
- ջնջվել են Տիգրանակերտի վաղքրիստոնեական ժայռափոր համալիրի, Վանքասարի եկեղեցու բարավորի ու խաչքարի խաչաքանդակները,
- ջնջվել են Ղայբալու գյուղի եկեղեցու և ջրաղացի արձանագրությունները (նկ. 26),
- ավերվել են Պտրեցիք գյուղի մոտ նորաստեղծ Լեսնոյե ադրբեջանական գյուղի տարածքի խաչքարերը և այլն:

Այսպիսով, բռնայուրացումն, ըստ էության, կարելի է բնորոշել որպես պետական քաղաքականություն, որն ուղղված է ոչ թե այլէթնիկ մշակութային ժառանգությունը սեփական կենսաապահովման ազդակի վերածելուն, այլ նրա օտարմանը բուն տերերից՝ կեղծգիտական վերագրություններ ստեղծելով, վերօգտագործելու և ոչնչացնելու միջոցով:

Մաս 3. Արցախյան առաջին պատերազմից հետո մշակութային ժառանգության պահպանությունը և վերականգնման գործընթացը

Արցախի Հանրապետության քաղաքականապես ճանաչված չլինելը, պատերազմական իրավիճակը և դրանից բխող անվտանգության գերակա խնդիրները, միջազգային համագործակցությունից կտրված լինելը, միջազգային կառույցներին անդամակցելու արգելքները և բարդությունները մշտապես լուրջ խնդիրներ են հարուցել Արցախում մշակութային ժառանգության պահպանության և միջազգայնացման համար՝ այդ ոլորտը ստորադասելով անվտանգության և պաշտպանական խնդիրներին: Այդուհանդերձ, Արցախի Հանրապետությունը, 1994 թվականի մայիսյան հրադադարից ի վեր՝ ձեռնամուխ էր եղել հարաբերական խաղաղ պայմաններում կազմակերպել մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգության պահպանությունը: Այս սկզբունքն ամրագրվել էր Արցախի Հանրապետության օրենսդրական համակարգում՝ համապատասխան օրենքների տեսքով *(Ի մասնավորի նշենք՝ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ԼՂՀ օրենքը հունիսի 18-ի ՀՕ-59, «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ԼՂՀ 2011 թվականի հոկտեմբերի 26-ի ՀՕ-59 օրենքը, «Գեղարվեստական կրթության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 748-Ն որոշումը, «Թանգարանների և թանգարանային ֆոնդի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 12-ի ՀՕ-50 օրենքը, «Գրադարանների*

և գրադարանային գործի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի հունիսի 27-ի ՀՕ-36-Ն օրենքը, «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, դրա կենսունակության պաշտպանության հայեցակարգին հավանություն տալու մասին» ԼՂՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 890-Ն որոշումը, «ԼՂՀ շրջաններում մշակույթի զարգացման ծրագիրը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 2013 թվականի հունիսի 18-ի 380-Ա որոշումը):

Մինչև արցախյան 44-օրյա պատերազմը Արցախի Հանրապետությունում գործում էին՝

- պետական թատրոն -2
- կամերային պետական նվագախումբ-1
- կամերային պետական երգչախումբ -2
- մանկապատանեկան և երիտասարդական պետական երգչախումբ -1
- ազգային նվագարանների պետական նվագախումբ -1
- պետական համույթներ -3
- ժողգործիքների համույթ (Բերձոր) -1
- պետական ջազ նվագախումբ -1
- երաժշտական դպրոց - 1
- արվեստի դպրոց - 11
- մշակույթի և երիտասարդության պալատ -1
- մարզամշակութային պալատ -1
- մշակույթի կենտրոն - 1
- մշակույթի և երիտասարդության կենտրոն – 6
- արվեստի միություն - 1
- ակումբներ- 183, որոնցից 113-ն ունեցել են շենք:

Կազմվել են Արցախի Հանրապետության պատմա-մշակութային անշարժ ժառանգության ցանկը և դրանց զգալի մասի անձնագրերը, որոնք ընդգրկում են ավելի քան 4000 միավոր, շուրջ 1500 հուշարձանների պահպանական գոտիներ:

Նախորդ տարիների ընթացքում մշակույթի ոլորտում պետության կողմից իրականացվել են մշակութային նյութական և ոչ նյութական արժեքների պահպանմանը, ոլորտի կադրերի որակի և նրանց սոցիալական վիճակի բարելավմանը, մշակութային ժառանգության մատչելիության ապահովմանն ուղղված բազմաթիվ միջոցառումներ:

Հուշարձանների պահպանության ոլորտում Արցախի իշխանությունները 1994-2020 թվականների ընթացքում նախաձեռնել են հոգևոր և աշխարհիկ կառույցների (եկեղեցիներ, վանական համալիրներ, կոթողներ, ամրոցներ, ապարանքներ, կամուրջներ) հետազոտման և վերականգնման աշխատանքներ: Հնագիտական հետազոտություններ են իրականացվել Հադրութի շրջանի Ազոխ գյուղի քարանձավում, նույն շրջանի Մեծ Թաղեր գյուղի «Շմանեք» քարանձավում, Շուշիի շրջանի Քարին Տակ գյուղի տարածքում գտնվող «Քարին տակ» (Ալեքսանա ղուզե) քարանձավում, Կերենի դամբարանադաշտում, Քաշաթաղի շրջանի Միրիկ գյուղի տարածքում գտնվող «Միրիկ» (կիկլոպյան) ամրոցում:

Հատկապես ուշագրավ և կարևորագույն իրադարձություն է 2005 թվականին Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախմբի կողմից հայոց արքա Տիգրան Բ Մեծի (95-55 թթ. մ.թ.ա.) Արցախում հիմնած

Տիգրանակերտ քաղաքի հայտնաբերումը: Պեղումները և ուսումնասիրությունները Տիգրանակերտում ընթացել են շուրջ 15 տարի և ընդհատվել են միայն 2020 թվականին: Արցախյան 44-օրյա պատերազմի արդյունքում հայկական հնագույն քաղաքը հայտնվել է ադրբեջանական օկուպացման տակ, և ներկայումս լրջագույն խնդիր է պահպանել միջազգային հնչեղություն ունեցող պեղված քաղաքը:

Հետազոտական լուրջ աշխատանքներ են իրականացվել հատկապես քրիստոնեական հուշարձաններում. Ամարասի վանք, Դադիվանք, Հոռեկավանք, Հակոբավանք, Ծիծեռնավանք, Հանդաբերդի Վանք, Վաղուհասի Մայրաքաղաք վանք, Տողի մելիքական ապարանք (նկ. 27), Բերդաշեն, Վաճառի Սուրբ Ստեփանոս վանք (նկ. 28) և այլն:

Նկ. 27 Տողի մելիքական ապարանքի ընդհանուր տեսքը պեղումներից և վերականգնումից հետո:

Նկ. 28 Վաճառի Սուրբ Ստեփանոս վանք, ընդհանուր տեսքը պեղումներից հետո:

Աշխատանքներ են տարվել Կարմրակուճ, Քարագլուխ, Ճանկաթաղ, Կարմիր գյուղ և այլ բնակավայրերի հուշարձաններում: Հադրութի շրջանի Քարագլուխ գյուղում կառուցվել է նոր եկեղեցի, մասամբ վերականգնվել է համայնքի հին եկեղեցին: Վերականգնման աշխատանքներ են իրականացվել Գտչավանքում, Դադիվանքում, Ամարասում, Պտկեսբերք վանքում, Կուսանաց վանքում, Փիրումաշեն եկեղեցում (նկ. 29), Դիզափայտի Կատարո վանքում: Ամբողջովին վերականգնվել է Շուշիի Գոհար աղայի մզկիթը (նկ. 30):

Նկ. 29 Փիրումաշենի եկեղեցի, ընդհանուր տեսքը վերականգնումից հետո:

Հուշարձանների վերականգնման և կառուցման աշխատանքներն իրականացվել են ինչպես Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցներով, այնպես էլ զանազան մեկենասների և բարեգործների նվիրատվություններով:

Նկ. 30 Շուշիի Գոհար աղայի մզկիթը վերականգնումից հետո:

Թանգարանային ու գրադարանային գործի զարգացման ոլորտում քայլեր են ձեռնարկվել նոր ցուցանմուշների ձեռքբերման, թանգարանային ու գրադարանային հավաքածուների համալրման, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, շենքային, գույքային, նյութատեխնիկական պայմանների բարելավման ուղղությամբ: Հատկապես նշելի է նոր թանգարանների բացումը՝ Տիգրանակերտ (նկ. 31), Քաշաթաղ, Շուշի և այլն: Մշակութային ժառանգության պահպանման ոլորտում, միջազգային գործընթացների և համագործակցության մաս կազմելու նկատառումներից ելնելով, կազմակերպվել են թանգարանների միջազգային օրվան, «Թանգարանների գիշերվան», «Եվրոպական ժառանգության օրերին» և գրադարանավարի օրվան նվիրված ամենամյա միջոցառումներ:

Նկ. 31 Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ցուցասրահներից մեկը:

Կարելի է փաստել, որ Արցախի կրթա-մշակութային կյանքը դանդաղ քայլերով կայունանում էր և որոշակի հիմք էր ստեղծում զարգացման համար, ինչն ընդհատվեց 2020 թվականին սկսված պատերազմի արդյունքում:

Մաս 4. Մշակութային վանդալիզմը 44-օրյա պատերազմի ընթացքում և հետո

2020 թ.-ի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմն ակնհայտորեն ուղղված էր ոչ միայն քաղաքացիական բնակչության վերացմանը, այլև այդ տարածքի մշակութային շարժական և անշարժ ժառանգության, մշակութային և կրթական հաստատությունների դեմ: Հարկ է նշել, որ մշակութային արժեքների միտումնավոր ոչնչացումը պատերազմական գործողությունների ժամանակ և

հետո միջազգային մի շարք կոնվենցիաներով և հռչակագրերով որակվում է որպես պատերազմական հանցագործություն:

Նշվածի ամենահայտնի օրինակը Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու ռմբակոծումն է, որի վրա 2020 թվականի հոկտեմբերի 8-ին երկու արկ է պայթել (նկ. 32): Պատերազմի ընթացքում՝ ավելի վաղ, ռմբակոծվել էր նաև Շուշիի Մշակույթի և երիտասարդության կենտրոնը, որը վերանորոգումից հետո վերաբացվել էր 2017 թվականին: Պատերազմի ընթացքում հրետակոծվել է Մարտունի քաղաքի մշակույթի պալատը (նկ. 33): Հադրութ քաղաքի բնակիչները, ովքեր ստիպված են եղել լքել իրենց տները, փաստում են, որ այրվել է Հադրութի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարանը: 2020 թվականի նոյեմբերի 5-ին ռմբակոծվել է Տիգրանակերտի հնագիտական հանգրվանը (նկ. 34):



Նկ. 32 Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին ռմբակոծումից հետո:

Նկ. 33 Մարտունի քաղաքի մշակույթի պալատը հրետակոծումից հետո:

Նկ. 34 Տիգրանակերտի հնագիտական հանգրվանը հրետակոծումից հետո:

Համաձայն Արցախի ԿԳՄՍՆ-ի տրամադրած տվյալների՝ նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրի ստորագրումից հետո Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել՝

- թվով 12 թանգարաններ՝ 19485 ցուցանմուշով՝
  - ✓ «Տիգրանակերտ» պատմահնագիտական պետական

արգելոց ՊՈԱԿ,

- ✓ «Քաշաթաղի շրջանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ,
- ✓ «Հադրութի Ա. Մկրտչյանի անվան հայրենագիտական թանգարան»,
- ✓ «Մեծ Թաղերի Ա. Խանփերյանցի տուն-թանգարան»,
- ✓ «Տումի Թևան Ստեփանյանի տուն-թանգարան»,
- ✓ «Շուշի քաղաքի պատմության թանգարան»,
- ✓ «Պրոֆ. Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարան»,
- ✓ «Շուշիի պատկերասրահ»,
- ✓ «Տողի Մելիքական ապարանք»,
- ✓ «Շուշիի գորգերի թանգարան»,
- ✓ «Շուշիի հայկական դրամի թանգարան»,
- ✓ «Կերպարվեստի պետական թանգարան»,

- մոտ 2000 հուշարձան, այդ թվում՝
  - ✓ վանքեր և եկեղեցիներ,
  - ✓ խաչքարեր,
  - ✓ տապանաքարեր,
  - ✓ դամբարաններ, գերեզմանոցներ, սրբավայրեր,
  - ✓ բերդեր, ամրոցներ, ապարանքներ,
  - ✓ այլ հուշարձաններ,
- շուրջ 230 կրթական հաստատություններ, այդ թվում՝
  - ✓ դպրոցներ,
  - ✓ արվեստի և սպորտի դպրոցներ,
  - ✓ մշակույթի տներ և ակումբներ,
  - ✓ ուսումնական այլ հաստատություններ:

2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագրի ստորագրումից հետո ադրբեջանական վերահսկողության տակ

անցած տարածքներում հուշարձանների և մշակութային-կրթական հաստատությունների հանդեպ վանդալային գործողությունները դարձել են ավելի ինտենսիվ: Դրա վկայություններն են սոցիալական կայքերում ադրբեջանցի օգտատերերի կողմից պարբերաբար տեղադրվող տեսանյութերը, որտեղ ադրբեջանական կողմը ոչնչացնում, աղավաղում և անարգում է հայկական մշակութային արժեքները: Նման տեսանյութերի և համացանցային հրապարակումների թիվն արդեն իսկ գերազանցում է 50-ը (առավել մանրամասն՝ https://monumentwatch.org/hy/): Ամենավառ օրինակներից է 2020 թվականի նոյեմբերի 15-ին ադրբեջանցի օգտատերերից մեկի հրապարակած տեսանյութը, որտեղ երևում է Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին՝ մասամբ ավերված վիճակում: Հստակ է, որ գրեթե ամբողջությամբ ավերվել են եկեղեցու գմբեթն ու զանգակատունը (նկ. 35):



Նկ. 35 Շուշիի Հովհաննես Մկրտիչ եկեղեցին (Կանաչ ժամ), ավերված գմբեթը և զանգակատունը:

Համացանցում տեղադրված մեկ այլ տեսանյութում հստակ երևում է, որ խոշտանգվել էր նաև Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին

(նկ. 36)։ Միջազգային հանրության քննադատության և ճնշման շնորհիվ այն մաքրվեց։

Հրադադարի հայտարարումից ի վեր ոչնչացվել են Մեխակավանի (Ջեբրայիլ) Զորավար Սբ. Աստվածածին եկեղեցին (նկ. 37), նույն շրջանի Շյուքյուրբեյլի գյուղում տուֆե խաչային հորինվածքով հուշարձանը (նկ. 38), Հադրութի Առաքել գյուղի խաչքարը (նկ. 39)։



Նկ. 36 Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին՝ խոշտանգված։

Նկ. 37 Մեխակավանի (Ջեբրայիլ) Զորավար Սբ. Աստվածածին եկեղեցին ամբողջովին ոչնչացված։

Նկ. 38 Շյուքյուրբեյլի գյուղում փուֆե խաչային հորինվածքով հուշարձանը ոչնչացված:

Նկ. 39 Հադրութի Առաքել գյուղի խաչքարն այժմ չկա:

Նկ. 40 Շուշիում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի ավերումը:

Նկ. 41 Հադրութի Ազոխ գյուղի Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների ավերումը:

Նկ. 42 Հադրութի ազատամարտիկներին նվիրված հուշահամալիրի ավերումը:

Նկ. 43 Որոտան քաղաքի (Կուբաթլու) Արցախյան առաջին ազատամարտին նվիրված խաչքարի ոչնչացումը:

Նկ. 44 Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում գտնվող ԽՍՀՄ ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցի կիսանդրին ոչնչացված:

Նկ. 45 Շուշիում՝ ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ Հովհաննես (Իվան) Թևոսյանի կիսանդրին ոչնչացված:

Արցախի օկուպացված տարածքներում ադրբեջանցիներն առանձնակի վայրագություններ են կատարում Արցախյան ազատամարտին և դրա հերոսներին նվիրված հուշարձանների, հուշակոթողների և համալիրների նկատմամբ, օրինակ Շուշիում քանդվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, որը տեղադրվել էր Արցախյան առաջին պատերազմից հետո և նվիրված էր նաև Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին (նկ. 40):



Նկ. 46 Հադրութի շրջանի Տումի գյուղի «Սիսեռ» աղբյուրի մոտ գտնվող հայ ազգային հերոս Թևան Սրեփանյանի կիսանդրին ավերված:

Հադրութի Ազոխ գյուղում ադրբեջանցիներն ավերել են Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան առաջին պատերազմի և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանները (նկ. 41), Հադրութի ազատամարտիկներին նվիրված հուշահամալիրը (նկ. 42), Որոտան քաղաքի (Կուբաթլու) Արցախյան առաջին ազատամարտին նվիրված խաչքարը (նկ. 43): Ոչնչացվել է Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում գտնվող ԽՍՀՄ ավիացիայի մարշալ Արմենակ Խանփերյանցի

կիսանդրին (նկ. 44), Շուշիում՝ ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ Հովհաննես (Իվան) Թևոսյանի կիսանդրին (նկ. 45), ավերվել է Հադրութի շրջանի Տումի գյուղի «Սիսեռ» աղբյուրի մոտ գտնվող հայ ազգային հերոս Թևան Ստեփանյանի կիսանդրին (նկ. 46): Վանդալիզմի գործողությունների է ենթարկվել Հայաստանի և Արցախի ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի արձանը: Ավերվել են Թալիշ, Քարին տակ, Մոխրենես, Զարդանաշեն, Ավետարանոց գյուղերի Արցախյան ազատամարտին նվիրված հուշակոթողները:

Նկ. 47 Շուշիի պատմական գերեզմանոցի ոչնչացումը:

Նկ. 48 Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի գերեզմանոցի ոչնչացումը:

Նկ. 49 Ասկերանի Շոշ համայնքի Սղնախի գերեզմանոցի ավերումը:

Նկ. 50 Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու սկզբնական կերպարի խեղաթյուրումը:

Ադրբեջանը՝ «շինարարական աշխատանքների» քողի տակ նպատակային վերացնում է ճանապարհի մոտ գտնվող հայկական պատմական բնակավայրերը, որոնք տարածաշրջանում հայերի հազարամյա գոյության ապացույցն են: Արբանյակային նկարների միջոցով հնարավոր եղավ փաստել Շուշիի պատմական գերեզմանոցի ոչնչացումը (նկ. 47): Ավերվել է Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի գերեզմանոցը (նկ. 48), Ասկերանի Շոշ համայնքի Սղնախի գերեզմանոցը (նկ. 49):

Պատերազմից հետո օկուպացված Հադրութի Տող գյուղի Կատարո եկեղեցին ադրբեջանական զինված ուժերի կողմից վերածվել էր զինվորական ապաստարանի:

Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության «աղվանացման» մեխանիզմը շարունակում է գործել նաև այսօր: Դրա վառ օրինակներից են Ծակուռի գյուղի եկեղեցու և Դադիվանքի համալիրն աղվանական հայտարարելն ու հայերեն արձանագրությունների ու խաչքարերի կեղծ հռչակելը, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու «ուղղափառացումը» և այդ կեղծ հիմքով անօրինական «վերականգնումները» (նկ.

50), «Թուխնակալ» ապարանքի համալիրի մոտակայքում «շինարարական» աշխատանքների կատարումը: Նման օրինակները, ցավոք, բազմաթիվ են և դրանց թիվն աճում է օր օրի:

Մաս 5. Մշակութային ժառանգության պահպանության խնդիրները միջազգային կոնվենցիաների լույսի ներքո

Տարբեր միջազգային կոնվենցիաներ, հռչակագրեր, օրենքներ և էթիկայի կանոններ կարգավորում և ձևավորում են մշակութային ժառանգության պաշտպանության իրավական համակարգերը: Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության իրավական հիմքերը հիմնականում բխում են 1954 թվականի մայիսի 14-ին ընդունված «Զինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին կոնվենցիայից», դրա կատարման կանոնակարգերից, գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանությանը վերաբերող առաջին (1954) և երկրորդ (1999) արձանագրություններից: Կոնվենցիայի առաջին հոդվածում սահմանվում է մշակութային արժեքը. «Անկախ ծագումից՝ յուրաքանչյուր ժողովրդի մշակութային ժառանգության համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ արժեքներ, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները, անկախ դրանց կրոնական կամ աշխարհիկ բնույթից...»: Կոնվենցիայի 4-րդ հոդվածն արգելում է վանդալիզմի, գողության, կողոպուտի կամ յուրացման ցանկացած գործողություն և բացարձակ արգելք դնում մշակութային արժեքների դեմ ուղղված հաշվեհարդարի գործողությունների վրա: 1954 թ. կոնվենցիային կից լրացուցիչ առաջին արձանագրության մեջ ներկայացված են գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության մեխանիզմներն ու ժառանգության ապօրինի

դուրսբերման և վերադարձի պայմանները: 1999 թ. Հաագայի կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը, մասնավորապես 9-րդ հոդվածի 1-ին կետը դրույթներ է առաջարկում օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ: Նույն փաստաթղթի 21-րդ հոդվածի երկրորդ մասը պետություններից պահանջում է կանխել այդ խախտումները:

Մշակութային ժառանգության աղավաղման, ոչնչացման և յուրացման բազմաթիվ դեպքերը վկայում են, որ ադրբեջանական կողմը խախտում է 1993 թվականին իր կողմից վավերացրած Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիայով և նրա երկու արձանագրություններով ստանձնած պարտականությունները, որտեղ (հոդված 4) մասնավորապես նշվում է. «Մշակութային արժեքների հարգումը. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են հարգել իրենց, ինչպես նաև մյուս կողմերի տարածքներում գտնվող մշակութային արժեքները՝ արգելելով այդ արժեքների, դրանց անմիջական շրջակայքի և պաշտպանական կառույցների օգտագործումն այնպիսի նպատակներով, որոնք զինված ընդհարման դեպքում կարող են հանգեցնել այդ արժեքների ավերմանը կամ վնասվելուն, և ձեռնպահ մնալով այդ արժեքների դեմ ուղղված թշնամական որևէ գործողությունից»:

Պատերազմների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանությանն ուղղված հոդվածներ կան նաև Ժնևի կոնվենցիայում և կից արձանագրություններում: Առաջին արձանագրության 85-րդ հոդվածի 4-րդ կետն արգելում է «Ժողովուրդների մշակութային կամ հոգևոր ժառանգություն համարվող, իրավասու միջազգային կազմակերպության շրջանակներում հատուկ պաշտպանություն ստացած պատմական հուշար-

ձանների, արվեստի գործերի կամ երկրպագության վայրերի թիրախավորումը»:

Գրավյալ տարածքներում մշակութային ժառանգության պաշտպանության սկզբունքներ է առաջարկում նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի մի շարք այլ կոնվենցիաներ. 1970 թ. «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը, արտահանումը և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի անօրինական փոխանցումն արգելող» կոնվենցիա, 1972 թ. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա, 2003 թ. «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացման վերաբերյալ հռչակագիրը» և այլն: Հուշարձանների պղծումը, անարգումը և վանդալիզմը խտրական վերաբերմունք է արցախահայության ժառանգության նկատմամբ, որը պաշտպանված է նաև «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածով:

Այս կոնվենցիաներում հիմնական գաղափարն այն է, որ մշակութային ժառանգության թիրախավորումը կամ միտումնավոր ոչնչացումը դիտարկվեն որպես գործողություններ ընդդեմ համաշխարհային ժառանգության և քննադատվեն միջազգային հանրույթի կողմից: Վերոնշյալ և նմանատիպ կոնվենցիաների հիմնական թերությունն այն է, որ նախատեսված և հասցեագրված են միջազգայնորեն ճանաչված պետություններին: Արցախի պարագայում այդ կոնվենցիաները կարծես թե գործունակ չեն, քանի որ Արցախը միջազգայնորեն ճանաչված պետություն չէ: Այս դեպքում պետք է առաջնահերթությունը տրվի ժողովուրդների մշակութային իրավունքների իրացման խնդրին: Այս իմաստով ավելի նպատակային է ուսումնասիրել Միջազգային քրեական դատարանի հռոմեական օրենքը (ստատուս), որը մշակութային արժեքների կանխամտածված ոչնչացումը համարում է պատերազմական հանցագործություն:

Մաս 6. Միջազգային մշակութապահպան կառույցների արձագանքը

Ինչպես պատերազմի, այնպես էլ հետպատերազմյան ընթացքում մշակութային ժառանգության պահպանության, մշակութային ցեղասպանության կանխարգելման նպատակով Հայաստանի և Արցախի Արտաքին գործերի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները պարբերաբար դիմել են միջազգային կառույցներին (ՅՈՒՆԵՍԿՕ (UNESCO), Թանգարանների միջազգային խորհուրդ ԻԿՈՄ (ICOM), Համաշխարհային հուշարձանների հիմնադրամ (WMF), Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհուրդ (ICOMOS), «Կապույտ վահան» միջազգային կազմակերպություն (BSI), Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման հարցերով միջազգային հետազոտական կենտրոն (ICCROM), Հնագետների եվրոպական ասոցիացիա (EAA), Հակամարտության գոտիներում ժառանգության պաշտպանության հարցերով միջազգային ալյանս (ALIPH), որպեսզի վերջիններս արձագանքեն, միջամտեն, կանխեն արցախյան մշակութային ժառանգության ոչնչացումը, անարգումը և աղավաղումը:

Պատերազմի ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից հայկական մշակութային հուշարձանների թիրախավորման ամենահայտնի օրինակը Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին է: Եկեղեցու ռմբակոծումը խստորեն դատապարտվեց ՀՀ և ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից: ՀՀ ԿԳՄՍՆ պաշտոնապես դիմեց միջազգային կառույցներին կոչ անելով խստորեն դատապարտել մշակութային վանդալիզմն Արցախում և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել Արցախի

մշակութային ժառանգության պաշտպանության համար: Պաշտոնական հայտարարության մեջ մասնավորապես նշվում էր. «Միջազգային կառույցների ոչ հասցեական կոչերն այսօր կրկին հանգեցնում են նրան, որ կրկին թիրախավորվում են այս անգամ էլ Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվող հայկական պատմամշակութային հուշարձանները: Ադրբեջանը կոպտագույնս խախտում է միջազգային իրավունքի նորմերը, ինչպես նաև ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի շրջանակներում իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները»: Պաշտոնական հայտարարության մեջ նշվում է, որ միջազգային հանրությունը և միջազգային հեղինակավոր կառույցները պետք է վճռականորեն և խստագույնս դատապարտեն ադրբեջանական շարունակական ագրեսիան, որի ընթացքում հայկական մշակութային ժառանգությունը մեծապես վտանգված է և կանգնած է ոչնչացման վտանգի առաջ: Ի պատասխան ՀՀ ԿԳՄՍՆ հայտարարությանը 2020 թվականի հոկտեմբերի 9-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայտարարություն է տարածում, որտեղ խորը մտահոգություն է հայտնում Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում բռնությունների սրման կապակցությամբ: Հայտարարության մեջ ՅՈՒՆԵՍԿՕ-ն բոլոր կողմերին կոչ է անում կատարել միջազգային հումանիտար իրավունքով, մասնավորապես, «Զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թվականի կոնվենցիայով և դրա երկու արձանագրություններով ստանձնած պարտավորությունները՝ կանխելու վնասի պատճառումը մշակութային ժառանգությանը: Հարկ է ընդգծել, որ ինչպես նախկինում, այս դեպքում ևս ՅՈՒՆԵՍԿՕ-ի հայտա-

ռարությունը կոնկրետ հասցեատեր չուներ, այլ ուղղված էր հակամարտող երկու կողմերին, մինչդեռ ակնհայտ է, որ մշակութային ժառանգության թիրախավորումը և ռմբակոծումը կազմակերպվել էր կոնկրետ կողմի՝ Ադրբեջանի իշխանությունների հրահանգով:

Հուշարձանների համաշխարհային հիմնադրամը (WMF) նույնպես անդրադառնում է Արցախի Սուրբ Ղազանչեցոցի ռմբակոծմանը՝ բացարձակապես անընդունելի համարելով մշակութային ժառանգության որևէ նմուշի միտումնավոր ոչնչացումը:

Շուշիի Սուրբ Ամենափրկիչ մայր տաճարի հրթիռակոծությանն անդրադարձել է նաև «The Art Newspaper» պարբերականը, որտեղ նշվում է, որ թեև Ադրբեջանը հերքել է իր ուժերի կողմից պատմական, մշակութային և կրոնական կառույցների և հուշարձանների թիրախավորումը, բայց ակնհայտ փաստ է, որ հստակ թիրախավորվում է հայկական ինքնությունը կրող մշակութային ժառանգությունը:

2020 թվականի հոկտեմբերի 16-ին մի շարք հռչակավոր և մեծանուն գիտնականներ, որոնց թվում էին Ն. Չոմսկին, Գ. Չ. Սպիվակը, Թ. Ալին, Վ. Բերբերյանը, Ջ. Հերմանը, Ք. Վեսթը, Ս. Բենհաբիբը և այլոք, բաց նամակ հրապարակեցին, որում կոչ են անում վերջ տալ մարդկային և մշակութային ջարդին, մասնավորապես նշելով Արցախյան մշակութային ժառանգության վտանգվածության խնդիրը և միջազգային հանրության կողմից այդ ժառանգության պահպանության հրամայականը:

Ակնհայտ իրողություն է, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի պայմանագրի ստորագրումից հետո ադրբեջանական վերահսկողության տակ անցած տարածք-

ներում հուշարձանների և մշակութային հաստատությունների հանդեպ վանդալային գործողությունները դարձել են ավելի ինտենսիվ: Դրա վկայություններն են ադրբեջանական մամուլում պարբերաբար տեղադրվող տեսանյութերը, որտեղ ադրբեջանական կողմը ոչնչացնում, աղավաղում և անարգում է հայկական մշակութային արժեքները: Նման դեպքերի թվի աճը մտահոգել է մշակութապահպան կառույցներին և կազմակերպություններին: 2020 թվականի նոյեմբերի 20-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրեն Օդրի Ազուլեն հանդես է եկել հայտարարությամբ՝ պատրաստակամություն հայտնելով տեխնիկական աջակցություն և առաքելություն ուղարկել Արցախ՝ պատմամշակութային և կրոնական ժառանգությանը ծանոթանալու և պահպանման ուղղությամբ անհրաժեշտ քայլերը նախանշելու նպատակով, որին այդպես էլ Ադրբեջանն իր համաձայնությունը չի տվել մինչ օրս:

Հայաստանի քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպություններ ևս դիմել են ՅՈՒՆԵՍԿՕ-ին Արցախում հայկական մշակութային արժեքների պահպանության և մշակութային ցեղասպանության կանխարգելման համար: Հայտարարության մեջ նշվում է. «Մենք՝ քաղաքացիական հասարակության մի խումբ կազմակերպություններ, հղում կատարելով Մշակութային ժառանգությունը դիտավորյալ ոչնչացնելու մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի հռչակագրին, Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թվականի կոնվենցիային և կից երկու արձանագրություններին, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2347 (2017) բանաձևին, դատապարտում ենք Արցախում Ադրբեջանի կողմից հայկական

մշակութային և կրոնական ժառանգության դիտավորյալ վնասումը և ոչնչացումը 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում և դրա ավարտից հետո, և ահազանգում ենք ՅՈՒՆԵՍԿՕ-ին միջազգային իրավունքի կոպտագույն խախտումների մասին, որոնք նպատակաուղղված են տարածաշրջանում հայկական պատմական արմատները ջնջելուն և հայկական մշակութային և կրոնական ժառանգությունը յուրացնելուն»: Քաղաքացիական հասարակության ակտիվությունը նկատելի է նաև Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես Ֆրանսիայում, որտեղ հայ գիտնականները և մտավորականները բարձրացնում են Արցախի մշակութային ժառանգության պահպանության խնդիրը:

Թեև Հայաստանի և Արցախի պետական մարմիններ, քաղաքացիական հասարակությունը, գիտնականները և մտավորականները պարբերաբար բարձրացնում են հայ մշակութային ժառանգության գոյութենական խնդիրները միջազգային հանրությանը և մշակութապահպան կազմակերպություններին, բայց հիմնականում, կարող ենք փաստել, որ միջազգային կառույցները բացի մտահոգություն հայտնելուց, կոնկրետ քաղաքական քայլեր չեն իրականացնում և լուծումներ չեն փնտրում Արցախի մշակութային ժառանգության պահպանության ուղղությամբ:

Արցախի մշակութային ժառանգության բռնայուրացումը Ադրբեջանի իշխանությունների կողմից մշակված, լուրջ մասնագիտական և ֆինանսական ռեսուրսներ ներառող, միջազգայնորեն իրականացվող քաղաքականություն է: Դրա դեմ տարվող քաղաքականությունն էլ պետք է ունենա հայկական երկու պետությունների փոխհամաձայնեցված, լուրջ ռեսուրսահեն քաղաքակա-

նություն: Կանխատեսելի է, որ մոտ ապագայում իրավիճակը էապես այս ասպարեզում չի փոխվելու: Եվ հայկական կողմից միասնական քաղաքականության հայեցակարգի մշակումը, նրանում պահպանության խնդիրների հստակեցումը, միջազգային իրավական և գիտական հարթակների ու մեխանիզմների կանոնակարգումը, մասնագիտական ներուժի կոնսոլիդացումը առաջնահերթ ռազմավարական խնդիրներ են: